

Teléfonos y direcciones de interés:

- **Empadronamiento**
Oficinas municipales de cada ayuntamiento
- **Atención al Ciudadano:**
Teléfono: 012 en todo el territorio de la Comunidad de Madrid
- **Comisaría General de Extranjería y Documentación:**
Calle General Pardiñas, 90 dup, 28006 Madrid
Teléfono: 91 322 34 00
- **Registro Civil Central:**
Calle Montera, 18 Madrid
Teléfono 91 701 43 00
- **Servicio de atención al ciudadano del Ayuntamiento de Madrid**
Teléfono: 010 en todo el territorio del municipio de Madrid

La traducción de esta guía ha sido realizada por:



Mediación Intercultural de la Consejería de Cultura y Turismo, Dirección General de Archivos, Museos y Bibliotecas en el programa Biblioteca Abierta

Օտարազգի բնակչության համար օգտակար տեղեկություններ

Տեղամասային գրանցումը ադմինիստրատիվ բնույթ է կրում, որտեղ հայտնվում են տվյալ տեղամասում ապրող մարդիկ: Իսպանիայում ապրող բոլոր անձինք, լինեն Իսպանիայի քաղաքացիներ, թե օտարերկրյա քաղաքացիներ, պարտավորված են գրանցվել իրենց բնակավայրի տեղամասային կենտրոնում, առանց հաշվի առնելու այն հանգամանքը թե արդյոք գտնվում են օրինական կամ անօրինական կարգավիճակով Իսպանիայում:

Գրանցվելու համար հարկավոր է անձամբ ներկայանալ տեղամասային կենտրոն, ձեր անձնական փաստաթղթերով, ապացուցել, որ բնակվում եք տվյալ բնակարանում, որտեղ ցանկանում եք գրանցվել՝ ներկայացնելով բնակարանի սեփականագիր, կամ վարձի պայմանագիր, ջրի գազի վճարաթուղթ և լրացնել տեղամասային կենտրոնի կողմից տրվող թերթիկը:

Բնակավայրը փոխելուն պես, պետք է դիմել նոր բնակավայրի տեղամասային կենտրոնին գրանցման խնդրանքով, որն իր հերթին ձեզ դուրս կբերի նախորդ բնակավայրի գրանցումից և կգրանցի ձեր նոր բնակավայրում: Նույն տեղամասային տարածքում հասցեն փոխելու կամ ձեր անձնական տվյալների մեջ ճշգրտում իրականացնելու նպատակով, պետք է ներկայանալ տեղամասային կենտրոն:

Այն արտասահմանցիները, որոնց երկրները չեն պատկանում Եվրոմիությանը և չունեն մշտական բնակչության իրավունք, պետք է յուրաքանչյուր երկու տարին մեկ երկարացնեն իրենց գրանցումը: Այն չանելու դեպքում, տվյալ տեղամասային կենտրոնի համապատասխան մարմինները կգրկեն ձեզ գրանցումից:

Քաղաքացիական և սոցիալական ծառայությունները, ուսումնական և բժշկական կենտրոնները բաժանված են աշխարհագրական սկզբունքով և պատկանում են այս կամ այն տեղամասային կենտրոնում, համաձայն իր դրացիության: Բազմաթիվ ծառայություններ պատկանող տեղամասային կենտրոնի մարմիններին, Մադրիդի կամ կենտրոնական կառավարությանը, հաստատում են մի շարք պահանջներ կապված գրանցման վաղեմության հետ, որոշակի ծառայություններից օգտվելու համար, ինչը ևս մեկ անգամ հաստատում է այն փաստը, որ չափազանց կարևոր է գրանցվել ձեր բնակավայրի տեղամասային կենտրոնում առաջին իսկ պահից:

Հասարակական բնակարանների հասանելիությունը, սպորտային կենտրոններից, մանկապարտեզներից, կրթական կուրսերից, թոշակներից, աշխատանքի իրավունքի երկարացումից, քաղաքացիություն խնդրելու իրավունքից, ամուսնությունից, ընտանիքի վերամիացումից օգտվելու համար կարևորագույն դեր է խաղում որևէ տեղամասային կենտրոնում առաջին իսկ պահից մեր գրանցման հանգամանքը:



Comunidad de Madrid

CONSEJERÍA DE ECONOMÍA Y CONSUMO

Instituto de Estadística
de la Comunidad de Madrid

Իրավական կանոնադրություն

Օրենքը 4/1996 10-ը հունվարի, վերափոխում է 7/1985 ապրիլի 2-ի օրենքը, հաստատելով տարածաշրջանային օրենսդրության սկզբունքները, նախատեսված քաղաքային գրանցման համար և Թագավորական հրամանը 2612/1996 դեկտեմբերի 20-ի, որի միջոցով վերափոխվում է բնակելի կենտրոնների և Տարածաշրջանային բաժանման մասին թագավորական հրամանը, 1690/1986 հուլիսի 11-ի:

Գրանցման միջոցով ներկայացվում և հաստատվում է անձանց բնակության փաստը համապատասխան տարածաշրջանում, իր բոլոր ադմինիստրատիվ հետևանքներով:

Իսպանիայում գտնվող յուրաքանչյուր անձ պարտավորված է գրանցվել իր բնակության տարածաշրջանում: Այն անձինք, ովքեր բնակվում են մեկից ավելի տարածաշրջանում, պետք է գրանցվեն այն տարածաշրջանում ուր բնակության ժամանակաշրջանը մեկ տարվա ընթացքում մեծագույնն է:

Դուք իրավունք ունեք տեղյակ լինել տարածաշրջանային կենտրոնում ձեր անձի մասին պարունակվող տվյալների մասին և պահանջել նրանց ճշտումը, եթե այն ոչ ճշգրիտ տեղեկություն է պարունակում:

Հաջորդ էջում նշվող տվյալները թույլ կտան իրականացնել Ձեր գրանցման համապատասխան մոդիֆիկացիան:

Ներկայացնելով սույն տեղեկանքը, լրացված Ձեր տեղամասային կենտրոնում, դուք Ձեր համաձայնությունն եք տալիս այն օգտագործվել Հաշվարկային Հանձնաժողովի կողմից:

Համաձայն ապրիլի 2-ի տեղամասային իշխանությունների և օտարազգիների տեղամասային գրանցման` համար 7/1985 օրենքի 2-րդ բաժնի 16.1 հոդվածի, բոլոր այն օտարազգիները, ովքեր մշտական բնակության իրավունք չունեն պետք է յուրաքանչյուր երկու տարի երկարացնեն իրենց գրանցումը: Գրանցման համապատասխան երկարացումը չիրականացնելու դեպքում տվյալ անձը մեխանիկորեն կգրկվի իր գրանցումից:

Նորհուրդներ սույն թերթիկը լրացնելու համար

- Գրեք գրիչով և մեծատառ տառերով: Նշեք սույն թերթիկում գրանցվող անձանց բոլոր տվյալները պարզորեն:

- Եթե գրանցումը պայմանավորված է բնակավայրի տեղափոխման հետ, նշեք նախորդ բնակավայրի համար նախատեսված վանդակում: Եթե ձեր նախորդ բնակավայրը եղել է արտասահմանում, նշեք երկիրը և իսպանական դեսպանությունը, որտեղ գրանցված եք եղել: Եթե բնակավայրի տեղափոխումը ի կատար է ածվում նույն տեղամասային տարածքում, նշեք նույն տեղամասային տարածքի համար նախատեսված վանդակում:

- Եթե գրանցվող անձնավորությունը երբեք որևէ տեղամասային կենտրոնում գրանցված չի եղել, ապա պետք է վանդակում նշել ոչ մի: Նույն ձևով պետք է լրացնել այս վանդակը նորածինների գրանցման համար:

- Լրացված փաստաթուղթը պետք է ստորագրված լինի դիմորդի կողմից, եթե նպատակը տվյալների ճշտումն է: Եթե խոսքը նոր գրանցման թերթիկի մասին է, ապա այն պետք է ստորագրեն բոլոր գրանցվող չափահաս անձինք: Եթե նոր բնակիչներ են ավելանում գրանցման թերթիկում, այս դեպքում արդեն գրանցված չափահաս բնակիչներից որևէ մեկը պետք է արտոնագրություն ներկայացնի, որպեսզի իրականացվի նոր գրանցումը:

- Լրացրեք վանդակը, որը նշում է “Ընդհանուր թիվը գրանցվածների այս թերթիկի վրա”, ապա հավելելու համար ընդհանուր հիմունքների անվտանգությունը:

- Որևիցե հարց ունենալու դեպքում, նրա պատասխանը կատանաք սույն թերթիկը ներկայացնելիս տեղամասային կենտրոն:

Կրթական Աստիճանի Լրացման Կողեր

- 11. Կարդալ և գրել չգիտի
- 21. Առանց կրթության
- 22. անավարտ միջնական կրթություն
- 31. միջնական կրթություն
- 32. առաջին աստիճանի մասնագիտական կրթություն ուսումնարանում
- 41. երկրորդ աստիճանի մասնագիտական կրթություն ուսումնարանում
- 42. կրթություն ուսումնարանում
- 43. Այլ ուսումնարանային կրթություններ (բուժքույր, քարտուղարուհի, համակրգչային ծրագրավորող և այլ մասնագիտություններ)
- 44. Բարձրագույն դպրոցների կրթություն (տնտեսական, դասախոսական և նմանատիպ կրթություններ)
- 45. ճարտարապետական և ինժեներական կրթություններ
- 46. Բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթություն
- 47. Ոչ համալսարանական բարձրագույն կրթական աստիճան
- 48. Դոկտոր կամ այլ բարձրագույն գիտական աստիճան

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԿԱՅԱՑՎԵԼԻՔ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Քաղաքապետարանի գրանցման թերթիկը` լրացված և ստորագրված
- Գրանցված անձանց ինքնությունը հաստատող փաստաթուղթ (ID փաստաթուղթ, այլ երկրի հպատակության փաստաթուղթ, անձնագիր, 15 տարեկանից ցածր երեխաների համար` ընտանեկան գրքույկ, այլն)
- Զբաղեցրած կացարանի փաստաթուղթ (սեփականության վկայական, վարձակալման պայմանագիր, հեռախոսի, ջրի, էլեկտրաէներգիայի համար պատասխանատու ընկերության կողմից տրված տարեկան ստացական կամ պայմանագիր, այլն): Այս փաստաթուղթն անհրաժեշտ չէ, եթե նոր բնակիչները ներգրավվում են արդեն իսկ քաղաքային գրանցում ունեցող ընտանիքների ցանկում:
- Մանրամասներն ուղղելու կամ թարմացնելու դեպքում փաստաթղթերը պետք է հավաստեն ճիշտ տեղեկություններ: